

ՆԱՐԻՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Տնտեսագիտություն, բակալավրիատ,
3-րդ կուրս

ԴՈԼԱՐԻԶԱՑԻԱՅԻ ՇԱՐԺԸՆԹԱՅԸ ՀՀ-ՈՒՄ
2012-2019 թթ.-ին

Հիմնաբառեր. դոլարիզացիա, արտարժույթի գերադասում, գնաճ, դեդոլարիզացիա, դրամավարկային քաղաքականություն, ակտիվ միջոցառումներ

Տնտեսության դոլարիզացիան (դոլարայնացումը) միջազգային դրամական շուկայի ֆենոմեններից է, որը դրսևորվում է երկրի ներսում օտարերկրյա արժույթի լայնորեն կիրառմամբ: Սույն հետազոտության ընթացքում կատարվել է ԵԱՏՄ երկրների դոլարիզացիայի համեմատական վերլուծություն՝ պայմանավորված այն հանգամանքով, որ ՀՀ տնտեսական գործունեությունն անմիջականորեն ածանցված է ԵԱՏՄ անդամ երկրների տնտեսության հետ: Վերլուծական աշխատանքի արդյունքում մատչանշվել են ՀՀ տնտեսության դոլարիզացիայի վրա ազդող գործոնները, ինչի հիման վրա առանձնացվել է դրամավարկային քաղաքականության գործիքակազմը՝ միաված ՀՀ տնտեսության դոլարիզացիայի կրճատմանը:

Այսպիսով՝ դեդոլարիզացիայի (ապադոլարայնացումը) գործընթացում յուրաքանչյուր երկիր պետք է մշակի սեփական գործիքակազմը՝ առաջնորդվելով այդ ոլորտում հաջողած երկրների փորձով:

Ներածություն: Սույն հետազոտությունը վերաբերում է ՀՀ-ում դոլարիզացիայի առաջացման պատճառների ու այն պայմանավորող գործոնների բացահայտմանը և դրամավարկային քաղաքականության համապատասխան գործիքակազմի առաջադրմանը՝ ուղղված դեդոլարիզացիայի գործընթացի արդյունավետ իրականացմանը:

Հետազոտության արդիականությունը նրանում է, որ ներկայում աշխարհի բազմաթիվ երկրներում դոլարիզացիան դարձել է տնտեսության անքակտելի մասը՝ մեծապես խոչընդոտելով տնտեսական քաղաքականության արդյունավետության բարձրացմանը, ուստի աճում է դրամավարկային քաղաքականության համապատասխան գործիքակազմի մշակման անհրաժեշտությունը դեդոլարիզացիայի իրականացման նպատակով:

Հետազոտության ընթացքում կիրառվել են համեմատության, գիտական վերլուծության, ինդուկցիայի, դեդուկցիայի, քանակական փոփոխություններից որակականի անցման մեթոդները, սվոթ վերլուծության որոշակի տարրեր, որոնք հիմք են հանդիսացել վերլուծական աշխատանքի իրականացման համար:


Դոլարիզացիայի շարժընթացը ՀՀ-ում 2012-2019 թթ.-ին: Տնտեսության դոլարիզացիան միջազգային դրամական շուկայի ֆենոմեններից է, որը դրսևորվում է երկրի ներսում օտարերկրյա արժույթի (ամենից հաճախ՝ ԱՄՆ դոլարի) լայնորեն կիրառմամբ: Դոլարիզացիայի հիմնական տնտեսական պատճառը ռեզիդենտների կողմից օտարերկրյա արժույթի գերադասումն է:

ՀՀ-ում հիմնական խնդիրը ֆինանսական դոլարիզացիան է, ինչը ենթադրում է արտարժույթով ներքին խնայողությունների առկայություն, այ-

սինքն՝ ավանդների դոլարիզացիա, ինչը հանգեցնում է բանկային համակարգի վարկերի դոլարիզացիայի: Հարկ է նշել, որ «ՀՀ օրենսդրությունն ու դրամավարկային քաղաքականությունը չեն սահմանափակում արտարժույթով բարեխիղճ տնտեսական գործառնությունները երկրի ներսում»¹: Աշխարհի շուրջ 95 երկրների շարքում ՀՀ-ն ֆինանսական դոլարայնացման մակարդակով վերջին 5 տարիների ընթացքում, ըստ հաշվարկների, զբաղեցրել է 10-11-րդ հորիզոնականները՝ պայմանավորված ավանդային և վարկային շուկաների դոլարայնացմամբ²:

ՀՀ տնտեսության դոլարիզացիայի բարձր մակարդակը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով.

1. ՀՀ տնտեսության բացությունը և փոքր մասշտաբները: ՀՀ ներմուծումը գրեթե 2 անգամ գերազանցում է արտահանման ծավալները³: Արտադրության փոքր ծավալներն ամբողջական պահանջարկի բարձր մակարդակի պայմաններում ավտոմատ կերպով մեծացնում են ներմուծվող ապրանքների, հետևաբար նաև արտարժույթի նկատմամբ պահանջարկը:



Գծապատկեր 1. ՀՀ արտահանման և ներմուծման շարժընթացը 2000-2018 թթ.⁴

Համաձայն ՌԴ ԱՎԾ տվյալների՝ Հայաստանից ՌԴ արտահանումը 2015 թ.-ին 2014 թ.-ի համեմատ կրճատվել է 26.5%-ով, իսկ 2013 թ.-ի համեմատ՝ 36.4%-ով: Վիճակագրությունը վկայում է, որ 2014-2015 թթ.-ին Հայաստանը Ռուսաստանում կորցրեց մի շարք ավանդական ապրանքային խմբերի շուկաներ, ավելին, Ռուսաստանից որոշակի ապրանքներ սկսեցին փոխարինել հայկական նմանատիպ ապրանքներին Հայաստանի շուկայում (օրինակ՝ մսամթերք, կաթնային արտադրանք, եգիպտացորեն, քաղցրավենիք, ապրանքներ այլուրից և այլն)⁵: Անհրաժեշտ է նշել, որ 2016 թ.-ին նկատվեց Հայաստանից ՌԴ արտահանման ծավալների աճ, այդ թվում՝ ռուսական շուկա «նոր» ապրանքային խմբեր դուրս գալու շնորհիվ (հատկանշական է, որ ավանդական ապրանքների արտահանման զգալի կրճատման հետ մեկտեղ ռուսական շուկա դուրս եկան որոշ ոչ ավանդական հայկական ապրանքներ, ինչպիսիք են պանիրը և տեքստիլային հագուստը, որոնցով ամրագրվել է արտահանման ծավալների հնգանգամյա աճ), սա-

¹ Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին ՀՀ օրենք, 2004:

² Financial Soundness Indicators. URL: <http://data.imf.org/?sk=51B096FA-2CD2-40C2-8D09-0699CC1764DA>

³ <http://www.armstat.am>


⁴ <https://databank.worldbank.org/reports.aspx?source=world-development-indicators#>

⁵ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի տվյալների բազա, www.eurasiancommission.org

կայն 2013 թ.-ի համեմատ այս ամն աննշան է, ինչից հետևում է, որ դեպի ՌԴ հայկական արտահանման ակտիվության հիմնական սահմանափակումներն անգամ ԵԱՏՄ շրջանակներում ինտեգրացիոն գործընթացների խորացման և առևտրային գործընթացների զգալիորեն հեշտացման պայմաններում դեռևս չեն հաղթահարվել:

Տրանսֆերտների գծով բնակչության եկամուտների կրճատմանը բնական արձագանք էր ապրանքների և ծառայությունների սպառման ծավալների կրճատումը ներքին շուկայում, ինչն էլ, իր հերթին, անդրադառնում է ներմուծման զգալի կրճատման վրա, ինչի մասին վկայում են ՀՀ արտաքին առևտրի, ներառյալ ՀՀ-ի և ՌԴ-ի միջև փոխադարձ առևտրի վիճակագրական տվյալները¹: Անհրաժեշտ է նշել, որ ներմուծման կրճատումը տեղի ունեցավ բացառապես տրանսֆերտների կրճատմամբ պայմանավորված համախառն վճարունակ պահանջարկի կրճատման հետևանքով, այլ ոչ թե, օրինակ, ներմուծման փոխարինման շնորհիվ, քանի որ հայկական դրամի համեմատաբար կայուն փոխարժեքը ԵԱՏՄ երկրների արժեզրկվող արժույթների համեմատ ներքին արտադրողներին թույլ չտվեց ամրապնդել իրենց գնային մրցունակությունն ազգային շուկայում: Այս պատճառով էլ արտահանման ու ներմուծման տատանումները փոխում են նաև արտարժույթի նկատմամբ պահանջարկը՝ պայմանավորելով դոլարայնացման դրական կամ բացասական շարժընթացը:

2. *Կախվածությունը տրանսֆերտներից:* ՀՀ ֆինանսական շուկան զգալիորեն կախված է արտասահմանից կատարվող դրամական փոխանցումներից:



Գծապատկեր 2. *Դրամական փոխանցումների շարժընթացը 2008-2018 թթ.*²


Բնակչության տնօրինվող եկամտի մի մասը ձևավորվում է հայկական սփյուռքից և սեզոնային միգրանտներից փոխանցված տրանսֆերտների հաշվին: Ստանալով այդ արժույթային պաշարները՝ բանկերը սկսում են ավելի շատ վարկեր տրամադրել գոյացած արտարժույթային պաշարներով, քան ազգային արժույթով: Սկսած 2014 թ. հոկտեմբերից՝ տրանսֆերտները զգալիորեն կրճատվում են: Այսպես՝ 2015 թ.-ին 2014 թ.-ի համեմատ դրանք կրճատվեցին \$491956 հազարով կամ 30.2%-ով, իսկ 2013 թ.-ի համեմատ՝

¹ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի տվյալների բազա, www.eurasiancommission.org, ՀՀ ԱՎԾ, http://armstat.am/file/article/sv_12_15r_411.pdf

² <http://www.cba.am>

\$670677 հազարով կամ 41%-ով: Ընդ որում, Ռուսաստանի տրանսֆերտները կրճատվեցին համապատասխանաբար՝ \$546217 հազարով (41%) և \$719311 հազարով (41%): 2016 թ.-ի հունվար-նոյեմբերի ընթացքում միտումը պահպանվել է. այսպես՝ 2013 թ.-ի հունվար-նոյեմբերի համեմատ Հայաստան մտած օտարերկրյա մասնավոր տրանսֆերտների ծավալը կրճատվել է 36.5%-ով, ընդ որում, Ռուսաստանից՝ 48.4%-ով¹: Հատկանշական է, որ 2016 թ.-ի միայն դեկտեմբերին արձանագրվեց տրանսֆերտների ներհոսքի արտառոց աճ, սակայն անհայտ աղբյուրներից, քանի որ ՌԴ-ից և ԱՄՆ-ից ներհոսքը պահպանվեց արդեն իսկ նշված նվազ շրջանակում: Տրանսֆերտների նվազման պատճառը Ռուսաստանում հայկական սփյուռքի ընթացիկ եկամուտների կրճատումն է: Փոփոխվել է նաև տրանսֆերտների արժույթային կառուցվածքը. ավելացել է ռուբլով փոխանցումների մասնաբաժինը դոլարայինների համեմատ, այսինքն՝ ներհոսքը կրճատվել է ոչ միայն ֆիզիկական ծավալներով, այլև ռուբլու արժեզրկման հետևանքով:

3. Պարզի ծավալները, դոլար/դրամ փոխարժեքի մեծ տատանումները




Գծապատկեր 3. Բանկային ավանդների դոլարիզացիայի շարժընթացը և ԱՄՆ դոլար/դրամ փոխարժեքի փոփոխությունը ՀՀ-ում 2000-2017 թթ.²

Որոշակի ժամանակաշրջանի կտրվածքով վերլուծությունների իրականացումը հնարավորություն է տալիս փաստելու, որ ՀՀ-ում դոլարայնացման կարևորագույն գործոն է ԱՄՆ դոլար/դրամ փոխարժեքային տատանումը: Այսպիսով՝ բնակչությունը դրամի կտրուկ արժեզրկման պայմաններում, կորցնելով վստահությունը ազգային արժույթի նկատմամբ, արտարժույթային ռիսկերից հեջավորվելու նպատակով դրամային ավանդները վերածում է դոլարայինի, ինչի հետևանքով մեծանում է բանկերի կարճ արտարժույթային դիրքը, ինչը կորուստների կհանգեցնի դրամի հետագա արժեզրկման պայմաններում: Իրենց հերթին, բանկերն արտարժույթային ռիսկերի կրճատման նպատակով մեծացնում են արտարժույթային վարկերի տեսակարար կշիռն իրենց պորտֆելում: Կարևոր է նաև այն հանգամանքը, որ դրամի կտրուկ արժեզրկման դեպքում տուժում են արտարժույթով վարկավորվածները,

¹ <https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx>

² Среднегодовой курс драм/доллар в 20-летнем разрезе, <https://armenpress.am/rus/news/782022/srednegodovoiy-kurs-dram/dollar-v-20-letnem-razreze.html>, <https://rate.am/ru/armenian-dram-exchange-rates/banks/cash>

քանի որ մեծանում է նրանց պարտքային բեռը: Թեև միջազգային փորձում դոլարայնացման գնահատման համար կիրառվում են D1-D5 ցուցանիշները, սակայն ՀՀ-ում առավել կիրառական են D2 և D5 ցուցանիշները՝ պայմանավորված ֆինանսական դոլարիզացիայի բարձր մակարդակով: Դիտարկենք ՀՀ տնտեսության դոլարիզացիայի մակարդակը 2012-2018 թթ.-ին՝ ըստ 5 հիմնական չափանիշների¹: Կատարված հաշվարկները վկայում են, որ 2015-2018 թթ.-ին ՀՀ-ում նկատվում է և՛ ավանդային, և՛ վարկային դոլարիզացիայի մակարդակի կրճատում՝ հանգեցնելով ֆինանսական դոլարիզացիայի կրճատման: Բանկերի վարքագիծը հասկանալի է. վերջիններս իրենց վարկային միջոցները ներգրավում են հիմնականում արտաքին աղբյուրներից և արտարժույթով: Այսինքն՝ օտարերկրյա ֆինանսավորումը խթանիչ հանգամանք է վարկերի դոլարայնացման բարձրացման համար: Կարծում ենք՝ այս խնդրի լուծման առավել արդյունավետ ուղիներից է օտարերկրյա ֆինանսավարկային կազմակերպությունների կողմից դրամային պարտատոմսերի թողարկումը, ինչը հնարավորություն կտա բանկերին ներգրավելու դրամային միջոցներ, մեծացնելու դրամային վարկերի ծավալը՝ նպաստելով դոլարայնացման մակարդակի և հետևաբար՝ արժույթային ռիսկերի մեղմմանը:




Գծապատկեր 4. ՀՀ-ում ավանդների դոլարիզացիան 2019 թ. հունվար-սեպտեմբերին²

Գծապատկերի տվյալների վերլուծությունից ակնառու է դառնում հետևյալ օրինաչափությունը. 2019 թ.-ի ողջ ընթացքում ՀՀ-ում նկատվում է ավանդային դոլարիզացիայի մակարդակի կայուն կերպով աստիճանական նվազում: Ապադոլարայնացման գործընթացում ստացված այս դրական արդյունքը հետևանք է ավանդային միջոցների տոկոսադրույքների կարգավորման: Մասնավորապես՝ 2019 թ.-ի հոկտեմբերի դրությամբ ՀՀ-ում արտարժույթով ավանդների եկամտաբերությունը 3.88% է, իսկ ազգային արժույթով ավանդներինը՝ ավելի քան 10%: Սա լրացուցիչ խթան է դառնում տնտեսական գործակալների համար իրենց ավանդներն ազգային արժույթով պահելու հարցում, որն էլ բերում է երկրում ֆինանսական դոլարիզացիայի կարևորագույն բաղադրիչներից մեկի՝ ավանդային դոլարիզացիայի կրճատմանը:

Քանի որ ՀՀ տնտեսական գործունեությունն անմիջականորեն ածանցված է ԵԱՏՄ գործունեությունից, ուստի առանցքային նշանակություն ունի

¹ Տե՛ս հավելվածում:
² Հաշվարկները կատարել է հեղինակը:

ՀՀ տնտեսության դոլարայնացման շարժընթացի դիտարկումը ԵԱՏՄ գործունեության համատեքստում:



Գծապատկեր 5. ԵԱՏՄ անդամ երկրների դոլարիզացիայի մակարդակը 2018 թ.¹

Գծապատկերի տվյալների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ԵԱՏՄ տարածքում դեդոլարիզացիայի գործընթացում առավել մեծ հաջողություն գրանցել է Ռուսաստանը՝ պայմանավորված այն հանգամանքով, որ այստեղ իրականացվում է նպատակաուղղված քաղաքականություն՝ միտված երկրում դոլարիզացիայի կրճատմանը և նույնիսկ բացարձակ վերացմանը: ՀՀ-ն ֆինանսական դոլարիզացիայի մակարդակով միության մեջ գրավում է միջանկյալ դիրք՝ ունենալով 50-60%-ի միջակայքում տատանվող վարկային և ավանդային դոլարիզացիա: ԵԱՏՄ անդամ երկրներում դոլարայնացման դեմ պայքարն իրականացվում է տարբեր մեթոդներով՝ սահմանվում են ավելի խիստ նորմատիվներ արտարժույթային ավանդների համար, արգելվում է արտարժույթով առևտուրը, ընդհուպ հոգեբանական ազդեցության լծակներ են գործադրվում՝ կոչ անելով բնակչությանը խնայողությունները պահել դրամով: Կարծում ենք՝ ՀՀ-ում դոլարայնացման կրճատմանն ուղղված բարոյա-հոգեբանական ազդեցությունն ավելի արդյունավետ կարող է լինել, քան վարչական միջոցառումները:

Արդյունավետ է, արդյոք, ՀՀ-ում պարտադիր պահուստավորման նորմի կիրառումը՝ որպես ապադոլարայնացման գործիք: ՀՀ ԿԲ-ն 2014 թ.-ի դեկտեմբերին արժույթային կարգավորման մեջ նոր տարր ներմուծեց՝ կիրառելով բանկային արտարժույթային պարտավորությունների պարտադիր պահուստավորման աննախադեպ բարձր դրույքներ: Այս նորմատիվային պահանջի կիրառման շնորհիվ՝ մինչ օրս բանկային համակարգը ՀՀ ԿԲ պահուստային հաշիվներում ստիպված սառեցնում է զգալի միջոցներ (նորմատիվի պահանջներին համաձայն՝ հայկական ազգային արժույթի փոխարկված), որոնք ծավալով գերազանցում են ՀՆԱ 5%-ը²՝ կրելով արժույթային և տոկոսային ռիսկեր ներգրավված ավանդների դիմաց: Այսպես՝ 2014 թ.-ի դեկտեմբերի 17-ին ՀՀ ԿԲ-ն արտարժույթով բանկային պարտավորությունների պարտադիր պահուստավորման նորման 12%-ից բարձրացրեց մինչև 24%³ ԿԲ-ում բացառապես դրամով պահուստավորման պայմանով (մինչ այդ պահանջ-

¹ Дедолларизация в странах ЕАЭС: основные тенденции и перспективы, № 83, стр. 4.

² ՀՀ կենտրոնական բանկի տվյալների բազա, <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>

³ ՀՀ կենտրոնական բանկի տվյալների բազա, <https://www.cba.am/am/SitePages/regbanks.aspx>


վում էր 6%-ը պահուստավորել դրամով, իսկ մնացած 6%-ը՝ արտարժույթով), ինչն էլ բառացիորեն մեկ օրվա ընթացքում դրամի փոխարժեքի կտրուկ ամրապնդման պատճառն էր: Այսպես՝ դեկտեմբերի 18-ին դոլարի փոխարժեքն ընկավ 30.2 կետով և ամրագրվեց 1 դոլարի դիմաց 497 դրամ մակարդակում: Դրամային դեպոզիտների գծով պահուստավորման նորման պահպանվեց 2%-ի մակարդակում: Ավելի ուշ՝ 2016 թ.-ի հոկտեմբերին այն իջեցվեց մինչև 18%, որը գործում է մինչ այսօր: Ազգային արժույթի փոխարժեքի արհեստական ամրապնդումը, ինչն իրականացնում էր ԿԲ-ն, բերեց զգալի բացասական հետևանքների: Անկասկած, նման քաղաքականությունն ինչ-որ չափով ապահովում է փողի առաջարկի աճի զսպում և հետևաբար՝ որոշակիորեն կրճատում գնաճային ճնշումները, նպաստում դոլարայնացման կրճատմանը: Սակայն, այն, զուգահեռաբար, զգալիորեն նվազեցնում է Հայաստանի արտահանման ներուժը՝ խթանելով դոլարայնացման ամրապնդումը:

Եզրակացություն: Ապադոլարայնացման նպատակով պետությունը բազմաթիվ միջոցներով կարող է ազդել տնտեսավարող սուբյեկտների վարքագծի վրա: Մի շարք երկրներում կիրառվել են արգելող մեթոդներ՝ լիովին ապացուցելով իրենց անարդյունավետությունը: Մասնավորապես՝ 1982 թ.-ին Բոլիվիայում արտարժույթով ավանդների հարկադիր փոխակերպումն ազգային արժույթով ավանդների հանգեցրեց կապիտալի արտահոսքի և բանկերի վարկունակության կրճատման: 3 տարի անց մակրոտնտեսական կայունությունը վերականգնելու նպատակով Բոլիվիան ստիպված եղավ վերացնել արտարժույթով ավանդների վերաբերյալ սահմանված արգելքը: Դոլարիզացիայի հաղթահարման մեթոդների ընտրության գործընթացում անհրաժեշտ է կենտրոնանալ պատճառների, այլ ոչ թե հետևանքների վերացման վրա: Սա ենթադրում է, որ տնտեսական քաղաքականության իրականացման հիմնական ուղղությունները պետք է լինեն.

- ազգային արժույթով գործիքների տոկոսադրույքների բարձրացումը՝ հաշվի առնելով տնտեսական աճի հնարավոր հետևանքները,
- ինֆլացիայի տեմպի նվազեցումը, եթե այն բարձր է,
- ազգային արժույթի արժեզրկման տեմպի նվազեցումը:

Դրամավարկային քաղաքականության որոշ միջոցառումներ կարող են ուղղակիորեն ազդել դոլարիզացիայի վրա, որոնք հիմնականում նախատեսված են արտարժույթով գործիքներ ձեռք բերելու և պահելու ծախսերի մեծացման վրա: Ընդգծենք այն հանգամանքը, որ թեև երկրները դեդոլարիզացիայի գործընթացում ունեն մեկ միասնական նպատակ, այն է՝ հաղթահարել դա, այնուամենայնիվ տարբեր են առաջադրված նպատակին հասնելու ճանապարհին երկրների որդեգրած միջոցառումները՝ պայմանավորված դրամավարկային քաղաքականության առանձնահատկություններով և իրենց առջև դրված գործառնական, միջանկյալ և հիմնական նպատակներով:

Առաջարկություններ: Տնտեսության ապադոլարայնացման նպատակով առաջարկվող միջոցառումները ներկայացնենք հետևյալ գծապատկերի միջոցով.



Փժապատկեր 6. Ապարդուրայնացման միջոցառումներ¹

¹ <http://4vlada.net/ekonomika/kak-borotsya-s-dollarizatsiei-ekonomiki>
<https://cyberleninka.ru/article/v/dengi-dollarizatsiya-kak-inflyatsionny-faktor>

Գրականություն

1. Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին ՀՀ օրենք, 2004:
2. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի տվյալների բազա, www.eurasiancommission.org
3. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի տվյալների բազա, www.eurasiancommission.org ; ՀՀ ԱՎԾ: http://armstat.am/file/article/sv_12_15r_411.pdf
4. ՀՀ ԱՎԾ, Հայաստանի ֆինանսների վիճակագրություն 2018, վիճակագրական ժողովածու, Երևան, 2018:
5. ՀՀ ԿԲ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ծեռնարկ:
6. ՀՀ կենտրոնական բանկի տվյալների բազա, <https://www.cba.am/am/SitePages/regbanks.aspx>
7. ՀՀ կենտրոնական բանկի տվյալների բազա, <https://www.cba.am/am/SitePages/regbanks.aspx>
8. Дедолларизация в странах ЕАЭС: основные тенденции и перспективы, № 83, с. 4.
9. <http://www.armstat.am>
10. <http://www.cba.am>
11. <http://4vlada.net/ekonomika/kak-borotsya-s-dollarizatsiei-ekonomiki>
12. <https://armenpress.am/rus/news/782022/srednegodovoiy-kurs-dram/dollar-v-20-letnem-razreze.html>
13. <https://cyberleninka.ru/article/v/dengi-dollarizatsiya-kak-inflyatsionnyy-faktor>
14. <https://databank.worldbank.org/reports.aspx?source=world-development-indicators#>
15. <https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx>

Հավելված

Աղյուսակ 1

ՀՀ տնտեսության դոլարայնացման մակարդակը 2012-2018 թթ.¹

Տարիներ	2012	2013	2014	2015	2016	2017	2018
Ռեզիդենտներից ներգրավված ավանդներ, ընդամենը	949754	1148849	1319733	1501844	1761825	2106015	2247556
Ռեզիդենտների արտարժույթային ավանդները, որից՝	601267	688571	846763	965776	1063214	1172769	1184148
Ցպահանջ	149044	146400	209052	240397	241706	318949	361299
Ժամկետային	452223	542171	637711	725379	821508	853820	822850
Փողի զանգվածը ժամանակաշրջանի վերջի դրությամբ	1346365	1545372	1674196	1855676	2180098	2582783	2538634
D1 ²	44,7%	44,6%	50,6%	52,0%	48,8%	45,4%	46,6%
D2	63,3%	59,9%	64,2%	64,3%	60,3%	55,7%	52,7%
Ռեզիդենտ ֆիզիկական անձանց ընդհանուր ցպահանջ ավանդները	131537	148278	157060	175421	203278	260188	318146
Ռեզիդենտ ֆիզիկական անձանց արտարժույթով ցպահանջ ավանդները	68314	70727	85641	90973	99977	125195	151970
D3	52,0%	47,7%	54,5%	51,9%	49,2%	48,1%	47,8%
Ռեզիդենտ ֆիզիկական անձանց ընդհանուր ժամկետային աանդները	506811	641949	737092	830538	952580	1091023	1145666
Ռեզիդենտ ֆիզիկական անձանց արտարժույթով ժամկետային ավանդները	372695	458676	550999	626547	684192	719822	712163
D4	73,5%	71,5%	74,8%	75,4%	71,8%	66,0%	62,2%
D5	64,1%	61,7%	65,8%	66,0%	64,7%	61,2%	53,9%

¹ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի ֆինանսների վիճակագրություն 2018, վիճակագրական ժողովածու, Եր., 2018:

² D1- D5 ցուցանիշները հաշվարկել է հեղինակը:

НАРИНЕ ПЕТРОСЯН*Экономика, бакалавриат, 3-й курс***ДИНАМИКА ДОЛЛАРИЗАЦИИ В АРМЕНИИ В ТЕЧЕНИЕ 2012-2019 ГГ**

Ключевые слова: *долларизация, валютные предпочтения, инфляция, дедолларизация, монетарная политика, активные меры*

Долларизация экономики является одним из явлений международного денежного рынка, что проявляется в широком распространении иностранной валюты внутри страны. В данном исследовании был проведен сравнительный анализ долларизации стран ЕАЭС в связи с тем, что экономическая деятельность РА напрямую связана с экономикой стран-членов ЕАЭС. В аналитической работе были выявлены факторы, влияющие на долларизацию экономики Армении, на основе которых был выделен инструментарий денежно-кредитной политики, направленный на снижение долларизации экономики Армении.

Таким образом, в процессе дедолларизации каждая страна должна разработать свой собственный инструментарий, руководствуясь опытом успешных стран в этой области.

NARINE PETROSYAN*3rd Year, Bachelor's Degree, Macroeconomics***DYNAMICS OF DOLLARIZATION IN ARMENIA DURING 2012-2019**

Key words: *dollarization, currency preferences, inflation, de-dollarization, monetary policy, active measures*

Dollarization of the economy is one of the phenomena of the international money market, which is manifested in the wide circulation of foreign currency within the country. In this study, a comparative analysis of the dollarization of the EAEU countries was carried out due to the fact that the economic activity of the Republic of Armenia is directly related to the economy of the EAEU member countries. In the research, the factors affecting the dollarization of the Armenian economy were identified, on the basis of which the monetary policy toolbox was identified, aimed at reducing the dollarization of the Armenian economy. Thus, in the process of dedollarization, each country should develop its own tools, guided by the experience of successful countries in this area.